

Փ Ո Ւ Ն Ձ

Օ Ր Ա Ք Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հասարակաց 40 փարայ է : — Պոլիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիտ պիտի վճարէ 100 թուոց համար ինկղաւտոաց մէջ 25 դրչ, դարձեալ 100 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լազրիս վերաբերեալ համակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է լողել առ Տնօրէնն ի Ղալսթիա Ս. Առաւորիչ եկեղեցի որ վարի դրանք կից հոր Գրատունը :

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Մէկ քանի օրէ ի վեր մուսուլմանք հարցունել ազգային Հիւանդանոցի հոգաբարձութեան թէ, արդեօք փութացան շնորհակալութեան գիր ուղղել հրատարեալ Պատրիարքին՝ կայսերական բարեխնամ կառավարութեան կողմանէ իրեն շնորհուած մեծագումար ամսականին մէկ մասը ազգային պատասխարելոց յատկացունելուն համար :

— Թէքիրտազի առաջնորդ զերթադէս արքեպիսկոպոսին հրատարած ըլլալուն լուրը ստոյգ չէ :

— Հաւատարիմ աղբիւրէ մը կըստագենք թէ՛ երկու Բինկեանցի ազգայինք մտադիր են մեզ հրատարակել ապ թէ, Բինկեանցի Չայեան Մ. Պապասաար աղան Բինկեանի գալուցին 1060 զուրուշի գիրք նուիրած չէ. և թէ՛ եթէ մենք իրենց կամքը չկատարենք, ուրիշ լրագրաց պիտի երթան : Պէտք կհամարիմք նոյն աղաներուն ծանուցանել թէ մեծ . Պալտասար ազգայի կլերարբերի ուղղել եթէ իրեն նկատմամբ սխալ մ'եղած է ֆունջի մէջ : Աւրիշներուն միջամտելը

մեղի իրաւունք կուտայ դիտել թէ՛ չեն ուզեր որ Բինկեանի վարժարանին օգնութիւն ըլլայ մանաւանդ այնպիսի անձի մը կողմանէ, որ ինքս կարող վիճակի մէջ կդանուի և կընայ մինչև յիշեալ գումարին հարիւրապատիկը նուիրել իւր հայրենեաց և ազգին ուրիշ կարևոր հաստատութեանց :

Յաւալի է որ նոյն երկու Բինկեանցիք ասկառին չգիտեն լրագրական ամենայայտնի մէկ օրէնքնալ :

— Ինչպէս յայտնի է, Խառն ժողովը վերջապէս մեծ զբաղմունքէ մը ազատեցաւ : Մայրաքաղաքիս այլ և այլ թաղերու հրատարեալ խորհրդոց տեղ ուրիշներու ընտրութիւնն եղաւ հեղաղհեալ, և կարծեմք՝ հիմա առանց թաղական խորհրդոց թաղ չմնայ : Թագական վարչութեանց պաշտօնն ու պարտաւորութիւնները մեծ ու կարևոր են : Ասոնց գործը միայն երիկ հնկան կուսներ գատել չէ, ինչպէս ումանք սխալմամբ կկարծեն : Ասոնց գլխաւոր պատան է դատախարակութիւնը թաղեցոց մէջ տարածելու համար թաղին երկսեռ մանկաւոյն կրթութեան հոգ տանել բարեկարգ վարժարաններու միջոցաւ : Վերջին

ժամանակներս, մանաւանդ վերջին օրերս ամեն տեղ մայրաքաղաքիս վարժարանաց վրայ կիսօտուի։ Գրեթէ ընդհանուր դժգոհութիւն կլսուի։ Արդարեւ եղաւ այնպիսի ժամանակ, որ մայրաքաղաքիս շատ թաղերու մէջ ազգային վարժարանք անկնեամ ձգուեցան, և թաղական վարչութիւնք անկարեւոր կամ նուազ կարեւոր խընդիրներով ժամաւաճառ եղան։ Ասոնց վրայ հիմա երկարօրէն պիտի խօսէինք և հրապարակաւ պիտի մեղադրէինք գլխաւոր պատճառները, եթէ ուրախութեամբ չնկատէինք որ մէկ քանի շաբաթէ ի վեր շատթաղերու մէջ վարժարանաց յառաջադիմութեան նկատմամբ ջանքեր կըլլան, նոր կարգադրու թիւններ և հոգարար ձուլթիւններ սահմանուելով։ Ահա իսպառիչի թաղական խորհուրդն ալ ընտրուեցաւ։ Շատ անկարգ է, կըսեն, գիւղին Ներսէսեան վարժարանը։ Հետեւաբար, նորընտիր խորհուրդոյն առաջին պարտքն է իւր բոլոր ուշագրութիւնն անոր բարեկարգութեան վրայ դարձունել։ Իճատիյէ թաղը, մեր բնակութեան հին վայրն ալ չը մոռնալ պէտք է։ Այս թաղը մէկերկու տարիէ հետէ կընդարձակի, բաղմնաթիւ տուններ աւելցած են, բայց վարժարանին աշակերտաց թիւն օր օրէ կտրուի եղեր։ Պարտ կհամարիմք խնդրել որ թաղին վարչութիւնը բարեհաճի հետադրուել թէ ինչ է պատճառը որ իճատիյէ սակաւութեան եղած ատենը վարժարանին մէջ 200ի մօտ մանչ ու աղջիկ ուսանողք կը սնուին եղեր, և հիմա երկու սենէն ուսանողաց թիւն հազիւ 70ի կը

հասնի, եթէ սխալ չէ մեզ հաղորդուած տեղեկութիւնը։

Մեր այս յօդուածոյն նպատակը բոլոր վարժարանաց վրայ տեսութիւն ընել չըլլալով, ոչսչափ բաւական կը համարիմք, փափաքելով որ թաղական խորհուրդք և թաղեցիք սիրով մէկմէկու աշակցին վարժարանաց բարեկարգութեան, արդիւնաւորութեան և յարատեւութեան համար։ Մեր ազգին համար բարեկարգ և արդիւնաւոր վարժարանաց սրչափ պէտք ըլլալուն վրայ ճառեր յօրինելը բոլորովին աւելորդ է, որովհետեւ շատ խօսուած է։

—————▶▶▶▶▶◀◀◀◀—————
Ի ԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստ. Մուլթանը բարեհաճեցաւ առաջին կարգի Մէճիտիյէ պատուանշան նուիրել Գաղղիոյ կայսեր ազգականներէն անցեալները մայրաքաղաքս եկող Մուրատ իշխանին որդւոյն։

Երկրորդ կարգի Օսմանիյէ պատուանշան՝ զինուորական ժողովոյն նախագահ իզդէթ փաշային։

Հինգերորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան՝ խաղախորդարանի (աէպպաղլամնէ) գլխաւորներէն Նէշաթ և վասըֆ էֆէնտիներուն։

—Քաղըտխանէի դաշտավայրին մէջ զօրահանդէս մը պիտի ըլլայ ի պատիւ կապլէսի իշխանին և իշխանուհւոյն։

Յիշեալ բարձրագատիւ ճամբորդներն այսօր մայրաքաղաքս կընմեն։ Հոս դանտուղ անդղիայիք երկու շուգենաւ վարձեր են, զանոնք Այլթիէֆանօէն գիմաւորելու համար։

—Մալթայի օսմանեան հիւպատոսաւ ըսնին գիւտնապետ անուանեցաւ Ալլըօ Մկրտիչ Էֆէնտին :

—Կլեմք թէ, Կօսքայի կողմը միկիթի մը շինութեան համար, գեաինը փորելու ատեն Բիւզանդեան կայսրութենէն մնացած խել մը ոսկի շքադրամներ (մետալ) գտնուեր են :

—Լէվրնթ Հէրըս կժանուցանէ թէ Բ. Գուռն որոշած է Կրետէէն դուրս հանել կղզոյն վերջին ապստամբութեան առաջնորդ ու գլուխ գլուխուղները :

—Աթէնքէն լուր կուտան թէ Երեսփոխանաց ժողովը լուծուելով նոր ընտրութիւնը մայիս 28ին պիտի ըլլայ : Կրսուի թէ Պ. Բանկապէի գալէն ետքը Յունաստանի կողմանէ զրկուելիք գեապանները և հիւպատոսները իրենց պաշտօնատեղին պիտի երթան : Պթութիասէս պէշը Գէորգ թագաւորին ներկայացեր է :

—Չորս օսմանեան զինուոր գլուխին ըմպելեօք տաքցած յոյներու հետ կուխ ընելու կելլեն Բերայի մէջ նոյն միջոցին այն կողմէն նաւային զբաւրոցի աշակերտները ատենելով աս զինուորաց կուխի պատրաստութիւնը, այնչափ ծաղր կրնեն որ զինուորքաւ մը նախով կատիպուին քաշուիլ իրենց ատղը :

—Գերձակ մը աճապարանօք իր խանութը դառնալու ատենը, անծանօթ մէկը դէմը կելլէ, ազաչելով որ իրեն խորհուրդ մը տայ կարևոր գործի մը վրայ : Գերձակը կհասկնայէ աւոր թէ այս բանը անկարելի է և թէ ժամադրութիւն ըրած է անպատճառ գանուիլ իւր խանութը : Բայց մեր վարպետորդին կրկին ստիպելով որ ի-

րեն մտիկ ընէ օձիքէն կբռնէ և այնչափ կրնէ որ դերձակը կամայ ահամայ կանդ կառնէ : Սակայն այնչափ կայլայլի այս բանութենէն, որ արիւնը ուղեղին ցատկելով շնչասպառ գետինը կիյնայ : Բարեբաղդաբար նոյն միջոցին անկէց անցնող բժիշկ մը տեսնելով դերձակին վիճակը, անմիջապէս արիւն առնել կուտայ և կսթափեցունէ զանի : Անժանօթ անձը այս դէպքիս մէջ փոխանակ դերձակին օգնելու, ինչպէս որ մարդկութիւնը կզահանջէ, կառնէ կքալէ . ո՞վ գիտէ, թերևս ուրիշ խորհրդատու մը փնտռելու համար :

—Նաբոլիէն կգրեն :

« Սյա առաջին անգամն է որ Նաբոլիի դատարանը ընդգիծութիւն չցուցնէր քահանայից ամուսնութեանը : Բայ որում Սալերօնի թեմէն անձ մը կրօնաւոր օրիորդի մը հետ նշանուած ըլլալով հրաման չըլլար անոր պակուիլ ինչպէս որ ատղոյն դատարանն ալ կվճռէ այսպէս : Սակայն Նաբոլիի դատարանը այս վճիռը մերժելուն, յիշեալ ամուք ամուսնացան : Յեղափոխութենէն ի վեր Նաբոլիի և Միկիլիոյ մէջ 30էն աւելի քահանայք ամուսնացան, սակայն այս առաջին անգամն է որ այս խնդիրը երկրորդ անգամ դատուեցաւ » :

—Բաթրիլրագիրը կրսէ թէ վեցամսեայ արձակման համար հրաման ստացող դաղղիացի զինուորականք կրկին իրենց գնդին միանալու պատուէր ընդուներ են : Կրսուի թէ 30,000 զինուորի արձակուրդ պիտի արուի :

—Ֆիօրէնցայէն լուր կուտան թէ խաղից կանանչ գիրքը հրատարակ-

ուերով Հռոմեայ խնդրոյն վերաբերեալ 69 գրութիւն կարգուեալէ 1867 դեկտ. 7էն մինչև 1868 դեկտ. 4 : վրասիմիր մեծ դուքսը Ֆիօրէնցա եկեր է :

—Մէքսիկոն եկած լուրերը կը հաստատեն թէ՛ Բուէպլա քաղաքին մէջ ապստամբութիւն մը տեղի ունեցեր է, որուն բուն շարժառիթը եղած է 3,000,000 դահեկանի արժուութեամբ գանձի տիրապետելու համար եղած դաւադրութիւնը : վա. սըն զիսոյ գանձը վէրա—Քրիզ փոխադրելու համար Նէնէզ գնդապետին հրաման կըլլայ 800 հոգիէ բաղկացեալ վաշտով մը Բուէպլա քաղաքը տանիլ, նոյն քաղաքին մէջ գանուող Մալօ գնդապետին յանձնել որ նոյն չափ մարդով տանի իւր սահմանեալ տեղը : Մայօ այս առիթը չուզէր կորսնցնել. կերթայ Նէկրէթ զորապետը կզանէ որ լեռները կթափառի եղեր աւազակայ խումբով մը, և կխոստանայ որ այս ստակը մէջերնին բաժնէն ետքը՝ զինքը զորապետ մը ընելուայ սահմանադրական գնդին : Նէկրէթ կընդունի այս հրահրը և Բուէպլա կգաւնայ : Մակայն կառավարութիւնը կասկած ընելով Մալօ զընդապետին վրայ կրկին հրաման կընէ Նէնէզ գնդապետին որ իւր գնդովը գանձը մինչև վէրա—Քրիզ տանի առանց Բուէպլա հանդիպելու : Այս կերպով գանձը ապահովութեամբ իւր որոշեալ տեղը կըրկուի, առանց էյնալու երկու դաւակցայ ճիրանը : Մալօի խոստանը համաձայն Նէկրէթ հրամանատար կըլլայ 4000 զորաց վըրայ և 175000 դահեկան ձեռք կձգէ :

դանազան կերպերով : Բայց վերջը վախնալով Մէքսիկոն կառավարութեան սպառնալիքներէն, կկախի լեռները իւր մարդիկներովը, ուր պաշարուած է եղեր այժմ կառավարութեան զօրքերովը :

—Պօմպէէն լուր կուտան թէ Ռուս պէլլահի մէջ լըրա Մայօ տնտեսեան գացեր է Շիր Ալի էմիրին, որ ձեռքովը ընծայ ըրեր է յեշեալ կառավարիչ լըրաին՝ իւր թուրը, յայտնելով միանգամայն որ միշտ բարեկամ պիտի ըլլայ Մեզ գիացուոյ :

—Մատրիտէն եկած գրերը կը մայնեն թէ Սպանիոյ ազգային ժողովը բաւական վէճ ըրեր է մահուան պատիժը վերցնելու համար եղած առաջարկութեան վրայ : Արդ էն յեղափոխութեան ի վեր՝ տան և ինը մարդապան դատապարտուեր են մահուան, որոնք ամեն ալ յետոյ մշտնջենաւ որ աշխատութեան դատապարտուեր են : Թո՛ղ որ Տիւրքէ զօրավարին ալ պատուէր ըլլայով որ Բուպլա կզգիին ապստամբներէն ձերբակալ ըրած անձինքը մահուան չդատապարտէ. կերեայ թէ բոլորովին վերջանայ այս պատիժը ժողովոյն վճռովը :

Հայ ազգանց կարգուելու դիւրին համբան եւ Հայ երեսնասորոց շրայլութեանը, եւ Հայ կանանց շէքիտիութեանը : — Գրեց արիկին Բրաբիտն : — Երեք զուրուչի կը ծախուի բոլոր Հայ գրավածառաց քով : — Բինկեան գիւղի մեծաքսի հունտի ազէկ տեսակէն կզանուի Պաղէ գափու մաքատան գիւմաց թիւ 30 բինկեանցի Տ. Յակոբեանց Ալեկամեղը արւոյն խանութը :

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
Հ. Ա. ԱԼԱՃԱՃԵԱՆ
ԵՍԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Յ. ՌԻՐԲՁԵԱՆ